# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/44 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2026թ. մայիսի 25-ին կնքված N ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/44-1 ծածկագրով պայմանագրում 2026թ. մայիսի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2026թ. մայիսի 29-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է ապրանքի մատակարարման դիմաց վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2026թ. մայիսի 29-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2026թ. մայիսի 25-ին կնքված N ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/44-1 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ապրանքի մատակարարման ձեռքբերման պահանջը չի դադարել և ապրանքի մատակարարման ձեռքբերման համար «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 2026 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյունքում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 1.1, 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ**